Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039

հեռ.՝ 010303010

mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱԲ-548 30.09 2024թ.

ՎԱՉԵ ՎՐԵԺԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ա/Ձ

ՀՎՀՀ 20176793

ՀԵՌ. +37493745823

NALBANDYAN-VACHE@RAMBLER.RU

Հարգելի՛ պարոն Նալբանդյան,

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի /այսուհետ՝ պատվիրատու/ և Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ-ի /այսուհետ՝ մասնակից/ միջև 2024թ հունիսի 07-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/29-4 ծածկագրով բժշկական սարքավորումների մատակարարման պայմանագիր:

Պայմանագրի համաձայն պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է պայմանագիրը կնքելուց հետո 60 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

26.07.2024թ-ի մասնակցի դիմումի համաձայն կնքվել է N1 համաձայնագիր, ըստ որի պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը երկարացվել է 30 օրացուցային օրով, սակայն մասնակցի կողմից մինչ օրս ապրանքի մատակարարում տեղի չի ունեցել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հինք ընունելով Պայմանագրի 8.9-րդ կետը պատվիրատուն միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել որակավորման ապահովման՝ 2055000 /երկու միլիոն հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման՝ 1370000 /մեկ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. /010/ 30 30 10 /4/